ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒԼԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Նախաբան

Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) 2022թ. երկրորդ կիսամյակի գործունեությունն ուղղված է եղել ԱՃԹՆ-ի 2022 թվականի աշխատանքային ծրագրի միջոցառումների իրականացմանը:

Հայտարարված մրցույթի արդյունքներով՝ ընտրվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի 4-րդ ազգային զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորը՝ Էրնսթ ընդ Յանգ (EY) խորհրդատվական ընկերությունը, որը դեկտեմբերին ավարտին է հասցրել և հանձնել է իր կողմից պատրաստված 2020-2021 թվականները ներկայացնող 4-րդ զեկույցը:

2022թ. դեկտեմբերի 22-ին կայացել է Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային չորրորդ զեկույցի ներկայացման համաժողովը, որին մասնակցել են ՀՀ կառավարության, հանքարդյունահանող կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության, միջազգային գործընկեր կազմակերպությունների շուրջ 100 ներկայացուցիչ:

Ընթացել են Opening Extractives ծրագրի աշխատանքները, մասնավորապես, 2022թ. հոկտեմբերի 17-ից 22-ը կայացել է Ծրագրի փորձագետների 2022թ. 2-րդ այցը Հայաստան, որը ներառում էր աշխատանքային հանդիպումներ և աշխատաժողով՝ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և լրագրողական դաշտի ներկայացուցիչների մասնակցությամբ: Աշխատաժողովը, որի թեման էր «Իրական շահառուների տվյալների օգտագործումը Հայաստանում», Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համագործակցությամբ անցկացվել է Աղվերանում լրագրողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար հոկտեմբերի 21-22-ին:

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը Շրջակա միջավայրի նախարարության հետ համագործակցությամբ 2022թ. օգոստոսի 3-5-ը Ծաղկաձորի Գրողների միության տանը կազմակերպել է «Համայնքների կողմից մշակվող և իրականացվող ծրագրերում բնապահպանական և առողջապահական միջոցառումների արդյունավետության բարձրացման և կարողությունների զարգացման» թեմայով դասընթաց-աշխատաժողով, որին մասնակցել են Հայաստանի լիազոր պետական մարմինների, մարզպետարանների, ազդակիր համայնքների, Երևանի քաղաքապետարանի շուրջ 50 պատասխանատու աշխատակից:

2022թ. սեպտեմբերին ԱՃԹՆ միջազգային խորհրդի նախագահ Հելեն Քլարկին է ուղարկվել նամակ-առաջարկություն՝ խորհրդի 2023թ. նիստերից մեկը Երևանում անցկացնելու հրավերով:

2022թ. աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքային միջոցառումների կատարման ընթացքի մասին ավելի մանրամասն ներկայացվում է ստորև: Աշխատանքների

կատարումը նկարագրված է ըստ Աշխատանքային ծրագրում սահմանված նպատակների ներքո կատարված միջոցառումների բաշխման և երկրորդ կիսամյակի համար սահմանված կատարման ժամկետների:

1. Հասանելի և արդիական տեղեկատվության ապահովում

Միջոցառումներ 1-7, 9

Հաշվետու ժամանակահատվածում տեղեկատվության տարածման և դրա հասանելիության ապահովման հիմնական միջոցը շարունակել է մնալ Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքը և դրա բովանդակությունը: Կայքի բովանդակությունը պարբերաբար թարմացվել է, հրապարակվել և հանրությանը իրազեկվել են ոլորտին վերբերվող նոր իրավական ակտերը, ԱՃԹՆ-ի փաստաթղթերը, տեղեկություններն ու նորությունները: Օտարալեզու օգտվողների համար կայքի կարևոր տեղեկատվությունը թարգմանվել է անգլերեն:

Հաշվետու ժամանակահատվածում կայքում ԱՃԹՆ-ի ընթացիկ գործունեությունը լուսաբանող 5 նորություն[1] է հրապարակվել, որոնք ներկայացրել են ԱՃԹՆ-ի տեղական և միջազգային գործընթացները, մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ իրադարձությունները: Դրանցից կարևորները հրապարակվել են նաև անգլերեն լեզվով: Facebook[2], YouTube[3] և Twitter[4] ցանցերում շարունակաբար թարմացվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը:

ԱՃԹՆ-ի առցանց հրապարակային հաշվետվությունների պարտադիր ներկայացման ժամկետին ընդառաջ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը մշտական խորհրդատվություն է տրամադրել հաշվետու ընկերություններին և լիազոր մարմիններին՝ այդ հաշվետվությունների լրացման և ծագող տեխնիկական խնդիրների հետ կապված: Այդ առումով, առանձնացել է ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից 2022թ. հուլիս 14-ին ազդակիր համայնքների ներկայացուցիչների, ինչպես նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակիցների համար անցկացված առցանց ուսուցում-քննարկումը, որը նվիրված էր համայնքների կողմից ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունները լրացնելու կարգին: Քննարկման մասնակիցներին տրամադրվել է նաև համապատասխան գրավոր ուղեցույց:

Հայաստանի ԱՃԹՆ-ի լուսաբանման և հանրայնացման համար կարևոր նշանակություն է ունեցել 2022թ. դեկտեմբերի 22-ին կայացած Արդյունահանող ճյուղերի թափանցիկության

[1] https://www.eiti.am/hy/Նորություններ
[2] https://www.facebook.com/EITIArmenia/
[3] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A
[4] https://twitter.com/EITI_Armenia

նախաձեռնության (ԱՃԹՆ/ EITI) տարեկան համաժողովը[5], որին ներկայացվել է Հայաստանի ԱՃԹՆ 2020-2021թթ. ազգային զեկույցը: Միջոցառմանը մասնակցել են ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի, ՀՀ կառավարության, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի, լիազոր մարմինների, ընդերքօգտագործող ընկերությունների, հասարակական և գիտական կազմակերպությունների, մեդիայի շուրջ 100 ներկայացուցիչ: Համաժողովին բացման խոսքով հանդես է եկել ՀՀ փոխվարչապետ, ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի նախագահ Տիգրան Խաչատրյանը, որը ներկայացրել է նախորդ տարիներին կատարված աշխատանքը ու ձեռքբերված արդյունքները՝ ընդգծելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և բազմաշահառու խումբը հանձնառու են ԱՃԹՆ-ի ստանդարտի շարունակաբար բարձրացվող պահանջները բավարարելու գործում և ակտիվորեն աշխատելու են մետաղական հանքարդյունաբերության ոլորտի լավ կառավարման գործելաոճն ամրապնդելու ուղղությամբ:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տնօրեն Մարկ Ռոբինսոնը, որը համաժողովին միացել է հեռավար եղանակով, իր ողջույնի խոսքում նշել է, որ Հայաստանի Հանրապետությունն ԱՃԹՆ-ի միջազգային համայնքում համարվում է օրինակելի երկիր, որը մեծ առաջընթաց է գրանցել թափանցիկության և հաշվետվողականության ստանդարտների ներդրման գործում: Մարկ Ռոբինսոնը հատկապես ընդծել է Հայաստանի առաջընթացը ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակման և իրական շահառուների բացահայտման պահանջների՝ առաջանցիկ տեմպերով կատարման գործում:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը կարևորել է ԱՃԹՆ-ի արդյունքների օգտագործման կարևորությունը նախարարության ընթացիկ աշխատանքներում, իսկ Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Նարինե Թադևոսյանը մեկ անգամ ևս ընդգծել է Հայաստանի տնտեսության հետագա զարգացման գործում հանքարդյունաբերության կայուն զարգացման կևևորությունը, որի մասն են կազմում թափանցիկությունը ու հաշվետվողականությունը:

Անկախ ադմինիստրատոր Էրնսթ ընդ Յանգ (EY) ընկերության թիմը ամփոփ ներկայացրել է ԱՃԹՆ-ի 4-րդ՝ 2020-2021 հաշվետու տարիներն արտացոլող ազգային զեկույցը՝ հիմնական բաժինները, ոլորտից պետական եկամուտներն ու դրանց բաշխումը, ընդերքօգտագործողների սոցիալ-տնտեսական ներդրման տվյալները, ոլորտը կարգավորող իրավական դաշտը և հիմնական օրենսդրական փոփոխությունները հաշվետու տարիներին: Ներկայացվել են նաև ֆինանսական տվյալների համադրումների արդյունքերը և ԱՃԹՆ-ի գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկությունները:

---

5 https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2022/12/23/armenia-eiti-4th-report-presentation-conference/138/

Համաժողովի երկրորդ մասում անցկացվել են երկու պանելային քննարկումներ: Առաջին՝ «Հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող փոփոխությունները ոլորտի զարգացման տեսլականի ներքո» խորագրով քննարկմանը մասնակցել են Ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հովհաննես Հարությունյանը, Շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետի տեղակալ Արթուր Ղավալյանը և Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Նարինե Թադևոսյանը: Երկրորդ պանելային քննարկման խորագիրն էր՝ «ԱՃԹՆ-ի տվյալների օգտագործումը որպես հակակոռուպցիոն և ոլորտի նկատմամբ հանրային վերահսկողության գործիք», որին մասնակցել են Էրնսթ ընդ Յանգ ընկերության իրավաբաններ Էդգար Մեյրոյանը և Գրիգոր Գրիգորյանը, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետ Տաթև Մկրտչյանը, Սիվիլնեթ մեդիայի լրագրող Անի Գրիգորյանը և ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի փոխնախագահ Վիկտորյա Բուռնազյանը:

Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021թթ. ազգային զեկույցի հայերեն և անգլերեն տարբերակները, զեկույցի սեղմագիրը լայն հանրության համար հասանելի են Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում[6]: Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի 2020-21 թվականների թվային տվյալները և ընդերքօգտագործող ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացված հրապարակային հաշվետվությունները ցանկացած շահառուի համար հասանելի են reports.eiti.am առցանց հաշվետվությունների հարթակում[7]:

2. Հաշվետվողականության և հանրային վերահսկողության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում

2.1. Հայաստանի ԱՃԹՆ-ի անդամակցության կարգավիճակի պահպանում

Միջոցառումներ 13-21, 24-29

Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ զեկույցներում բացահայտված, ինչպես նաև ԲՇԽ-ի և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ քննարկումների արդյունքում արձանագրված մետաղական հանքարդյունաբերության ոլորտի իրավական և ընթացակարգային բացերի վերացման աշխատանքների ճանապարհային քարտեզի նախագիծը ԲՇԽ-ի անդամների և աշխատանքային խմբերի հետ

[6] https://www.eiti.am/hy/annual-reports/2022
[7] https://reports.eiti.am/hy/

քննարկվելու է 2023թ. 1-ին կիսամյակում՝ որոշելու համար հարցերի քննարկման և իրականացման ժամանակացույցը և արդյունքները:

Հաշվետու ժամանակաընթացքում ԲՇԽ-ի նիստեր, ինչպես նաև ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումներ տեղի չեն ունեցել, անդամների միջև անհրաժեշտ հաղորդակցությունն ու համաձայնեցման ենթակա հարցերի քննարկումները տեղի են ունեցել էլեկտրոնային կապի միջոցներով:

ԲՇԽ-ի կառավարության խմբակցության կազմում տեղի է ունեցել փոփոխություն՝ ԲՇԽ-ի նախագահի պաշտոնը 2022թ. դեկտեմբերի 12-ից լքել է Համբարձում Մաթևոսյանը՝ փոխվարչապետի պաշտոնից ազատվելու հիմքով: ԲՇԽ-ի նախագահի պաշտոնը 2022թ. դեկտեմբերի 19-ից զբաղեցրել է Հայաստանի նորանշանակ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը: Կառավարության խմբակցության կազմը 2022թ. դեկտեմբերի 16-ից համալրել է Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանը, որը փոխարինել է ԲՇԽ-ում Շրջակա միջավայրի նախարությունը մինչ այդ ներկայացնող նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյանին:

ԲՇԽ-ի կողմից հաստատվել և 2022թ. հունվարին հրապարակվել են ԱՃԹՆ-ի 2021թ. չորրորդ եռամսյակի ԱՃԹՆ-ի առաջընթացի հաշվետվությունը[8]: Մշակվել են են ԱՃԹՆ-ի 2021թ. տարեկան, 2022թ. առաջին կիսամյակի առաջընթացի հաշվետվությունները:

2022թ. երկրորդ կիսամյակում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հանդիպումներ և հեռավար քննարկումներ է ունեցել ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության, տարածաշրջանային քարտուղարությունների, Օփեն Օուներշիփ կազմակերպության, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչների, լիազոր մարմինների պատասխանատուների, ԲՇԽ-ի անդամների հետ:

2022թ. օգոստոսի 8-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանն է փոխանցվել կազմակերպությունում Հայաստանի անդամավճարության գումարը՝ 10 հազար ԱՄՆ դոլարի չափով:

ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության 2022թ. երկրորդ կիսամյակի աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքերը իրականացնելիս դրանք պարբերաբար համաձայնեցվել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ու Համաշխարհային բանկի հետ՝ որպես դոնոր կազմակերպության:

[8] https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80

Հայաստանի 2-րդ վավերացման նախապատրաստական աշխատանքները իրականացվելու ն 2023թ. առաջին կիսամյակում, քանի որ վավերացման գործընթացն ինքնին կայանալու է 2023թ. հուլիսին:

ԱՃԹՆ-ի քարտուղարությունը մասնակցություն է ունեցել Opening Extractives ծրագրի շրջանակում 2022 թվականի հոկտեմբերի 17-ից 22-ը Օփեն Օուներշիփ (OpenOwnership) և ԱՃԹՆ կազմակերպությունների պատասխանատուների հայաստանյան այցը[9] և աշխատանքային հանդիպումները կազմակերպելու գործում: Այցի առաջին երեք օրերին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության երկրի գծով համակարգող Օլեսյա Նեխորոշկոն հանդիպումներ է ունեցել Արդարադատության նախարարության, Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալության, Շրջակա միջավայրի նախարարության, ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության պատասխանատուների, ԱՃԹՆ-ի ազգային զեկույցը մշակող Էրնսթ ընդ Յանգ խորհրդատվական ընկերության թիմի, ինչպես նաև բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամների հետ:

Հանդիպումների ընթացքում Օ.Նեխորոշկոն հայաստանյան գործընկերների հետ քննարկել է ԱՃԹՆ-ի 2020-2021թթ. ազգային զեկույցի կազմման ընթացքը, ԱՃԹՆ պահանջների իրականացման ուղղությամբ ԲՇԽ-ի խմբակցությունների գործողությունները և առաջիկա տարվա ընթացքում նախանշվող աշխատանքները:

ԱՃԹՆ-ի համայնքում Հայաստանի՝ որպես առաջատար դիրքեր ունեցող երկրի հեղինակությունը բարձրացնելու, ինչպես նաև հանքրդյունաբերության ոլորտում նոր բիզնես գործընկերներ գտնելու հնարավորությունները մեծացնելու նպատակով 2022թ. սեպտեմբերի 19-ին ԲՇԽ-ի գործող նախագահ Համաբարձում Մաթևոսյանի անունից ԱՃԹՆ-ի միջազգային Խորհրդի նախագահ Հելեն Քլարկին նամակ է ուղարկվել՝ ԱՃԹՆի Խորհրդի նիստերից մեկը Երևանում անցկացնելու առաջարկով: 2022թ. հոկտեմբերի 6-ի իր պատասխան նամակով տիկին Քլարկը ընդունել է հրավերը և առաջարկել է աշխատանքային մակարդակով քննարկել 2024թ.-ին պլանավորված ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերից մեկը Երևանում անցկացնելու հնարավոր ժամկետները :

Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկայացուցիչները մասնակցել են մի շարք միջազգային և տեղական առկա և հեռավար միջոցառումների և քննարկումների, մասնավորապես.

1) 2022թ. հուլիսի 13-ին Օփեն Օուներշիփ (OpenOwnership) կազմակերպության կողմից իրական շահառուների բացահայտման ոլորտում առաջատար հանդիսացող երկրների

---

9 https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2022/10/24/opening-extractives/136/

մասնակցությամբ բարձր մակարդակի պանելային քննարկմանը՝ «Նոր գլոբալ հորիզոններ. Իրական շահառուների թափանցիկության համար աճող հավակնություններ» թեմայով վեբինարին,

2) 2022թ. հուլիսի 27-ին անցկացված Բաց կառավարման գործընկերության հայաստանյան նախաձեռնության 2022-2024թթ. գործողությունների ազգային ծրագրի քննարկմանը,
3) 2022թ. օգոստոսի 8-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից կազմակերպված «Պայմանագրերի թափանցիկության ցանցի» առցանց քննարկմանը,
4) 2022թ. սեպտեմբերի 6-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից կազմակերպված «Արդյունահանող ճյուղերում ԱՃԹՆ-ի կիրառման միջոցով կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը» թեմայով վեբինարին, որտեղ Հայաստանի փորձի մասին ելույթ է ունեցել ազգային քարտուղարության ղեկավարը,
5) 2022թ. հոկտեմբերի 10-13-ը Օսլոյում անցկացված ԱՃԹՆ-ի ազգային համակարգողների տարեկան հանդիպմանը[10] և ԱՃԹՆ-ի խորհրդի նիստին՝ հեռավար եղանակով,
6) 2022թ. հոկտեմբերի 6-ին, 27-ին և նոյեմբերի 17-ին Opening Extractives ծրագրի շրջանակում Օփեն Օուներշիփ (OpenOwnership) կազմակերպության կողմից անցկացված «Իրական շահառուների տվյալների ստանդարտի (BODS)» թեմայով[11] վեբինարների շարքին,
7) 2022թ. նոյեմբերի 22-ին ԶՊՄԿ-ի 70-ամյակի միջոցառումների շրջանակում «Հանքագործության կայուն զարգացում. ներդրումներ» թեմայով կայացած կոնֆերանսին[12] և «Զարգացում և մոդերնիզացիա» թեմայով պանելային քննարկմանը,
8) 2022թ. հոկտեմբերի 21-22-ին Օփեն Օուներշիփի և ԱՃԹՆ-ի աջակցությամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից լրագրողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար Աղվերանում անցկացված «Իրական շահառուների տվյալների օգտագործումը Հայաստանում» թեմայով աշխատաժողովին[13]
9) 2022թ. նոյեմբերի 8-ին NCG-Nordic Consulting Group կազմակերպության փորձագետների հետ կայացած հանդիպմանը, որի քննարկման թեման «կանաչ էներգետիկայի» անցման հայաստանյան իրողություններ էին,
10) 2022թ. նոյեմբերի 30-ին ՀՀ ԳԱ երկրաբանության թանգարանի և երկրաբանական ֆոնդի հիմնադրման 85-ամյակին նվիրված «Երկրաբանությունը զարգացող

[10] https://eiti.org/events/eiti-national-coordinators-meeting-2022
[11] https://www.openownership.org/en/topics/opening-extractives/
[12] https://www.youtube.com/watch?app=desktop&v=IjNEUfRqZww&fbclid=IwAR3oO4WzwIfR0OqLLhR_A1Cj51ZkPRymdO-Iy0HrTx0H_V_KPcJiux1GpL8
[13] http://www.foi.am/hy/news/item/2304/

աշխարհում. Հայաստանի երկրաբանության անցյալը, ներկան և ապագան» աշխատաժողովին

11) 2022թ. դեկտեմբերի 1-ին Օփեն Օուներշիփ (OpenOwnership) կազմակերպության կողմից կազմակերպված իրական շահառուների բացահայտման ոլորտում առաջատար հանդիսացող երկրների մասնակցությամբ իրական շահառուների ոլորտում բարեփոխումների տեխնիկական խնդիրներին վերաբերվող քննարկմանը[14] :

2.2. ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում

Միջոցառում 36-40

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի 4-րդ՝ 2020-2021թթ. ֆինանսական տարիները արտացոլող ազգային զեկույցը կազմող Էրնսթ էնդ Յանգ ընկերությունը, հաշվի առնելով զեկույցի նախագծի վերաբերյալ բոլոր շահագրգիռ կողմերի և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացրած առաջարկությունները և դիտողությունները, ներկայացրել է ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին համապատասխանող վերջնական զեկույցը: Զեկույցի կազմման ընթացքում մի շարք աշխատանքային հանդիպումներ ու քննարկումներ են անցկացվել ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության, լիազոր պետական մարմինների պատասխանատուների, համայնքների ներկայացուցիչների, ընդերքօգտագործող ընկերությունների ներկայացուցիչների հետ: Զեկույցի նախագծերը շրջանառվել են բոլոր շահագրգիռ կողմերի միջև, ինչպես նաև ներկայացվել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության երկրի համակարգող թիմի կարծիքին: Ստացված առաջարկությունների և նկատառումների հիման վրա խորհրդատուն լրամշակել է զեկույցը և դեկտեմբերի 2-րդ կեսին ներկայացրել է վերջնական զեկույցը և զեկույցի սեղմագիրը: Հայաստանի ԱՃԹՆ-ի 4-րդ զեկույցը հրապարակվել է[15] և հանրությանն է ներկայացվել 2022թ. դեկտեմբերի 22-ին կայացած ԱՃԹՆ-ի տարեկան համաժողովին[16:]

Զեկույցում ներկայացվող տվյալները բաց ձևաչափով հասանելի են Հայաստանի ԱՃԹՆ-ի reports.eiti.am[17] առցանց հաշվետվության հարթակում:

ԱՃԹՆ-ի չորրորդ՝ 2020-2021թթ. զեկույցի ներկայացման արդյունքներով արձանագրված առաջարկությունները, թերությունները և բացերը, ինչպես վերևում նշվել է՝ կմիացվեն ԱՃԹՆ-ի առաջին, երկրորդ և երրորդ զեկույցների արդյունքներով արձանագրված հանքարդյունաբերության ոլորտի իրավական և ընթացակարգային բացերի վերացման

[14] https://www.opengovpartnership.org/beneficial-ownership-leadership-group/
[15] https://www.eiti.am/hy/annual-reports/2022
[16] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2022/12/23/armenia-eiti-4th-report-presentation-conference/138/
[17] https://reports.eiti.am/hy/

աշխատանքների հետ և 2023թ. առաջին կիսամյակում կքննարկվեն ԲՇԽ-ի անդամների և աշխատանքային խմբերի հետ՝ որոշելու համար հարցերի քննարկման և իրականացման ժամանակացույցը:

Ըստ չորրորդ զեկույցի արդյունքների՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները պետական մասնակցությամբ ընկերությունների մասով վերաբերելի չեն Հայաստանին, ուստի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրում նշված թեմայով նախատեսված միջոցառումը չի անցկացվել, իսկ էներգետիկ անցմանը վերաբերվող դրույթները և դրանց կիրառելիությունը համապատասխան շահառուների հետ կքննարկվի 2023թ.-ին:

2.3. Իրական շահառուների բացահայտման առցանց հանրային ռեգիստրի գործարկում, իրական շահառուների մասին տեղեկատվության հասանելիության ապահովում, հանրային վերահսկողության հնարավորությունների աճ

Միջոցառումներ 46.1-47

Իրական շահառուների մասին տեղեկատվության որակի ապահովման և հանրային վերահսկողության աճին էր ուղղված Opening Extractives ծրագրի պատասխանատուների Հայաստան կատարած աշնանային այցը: 2022թ. հոկտեմբերի 17-ից 22-ը Հայաստանում գտնվող Օփեն Օուներշիփ (OpenOwnership) կազմակերպության քաղաքականության գծով տնօրեն Լուիզ Ռասել-Պրիվատան և հաղորդակցության պատասխանատու Նյաշաձամվարի Վերան աշխատանքային հանդիպումներ են ունեցել Արդարադատության նախարարության[18], ԱՆ իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալության, հասարակական կազմակերպությունների և լրագրողական դաշտի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում հյուրերը հայաստանյան գործընկերների հետ քննարկել են Հայաստանում Opening Extractives ծրագրի իրականացման ներկա իրավիճակը, անհրաժեշտ տեխնիկական և իրավական աջակցություն տրամադրելու հնարավորությունները:

Այցի շրջանակներում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հոկտեմբերի 19-ին կազմակերպել է «Կանայք իրական շահառուների թափանցիկության գործընթացում» խորագրով «բաց զրույց» ձևաչափով պանելային քննարկում[19] իրական շահառուների (ԻՇ) բարեփոխումն իրականացնող կանանց մասնակցությամբ: Պանելային քննարկման հյուրերն էին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյդոյանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Քրիստիննե Գրիգորյանը, ՀՀ ԱՆ նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետ Տաթևիկ Մկրտչյանը, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության ապահովում (Opening

[18] https://www.moj.am/article/3307
[19] http://www.foi.am/hy/news/item/2302/

Extractives) ծրագրի հաղորդակցության պատասխանատու Նյաշա Վերան, ՀՀ ՎԱ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը, ՀՀ ՎԱ Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) քարտուղար, հայաստանյան կոնտակտային անձ Լիլյա Աֆրիկյանը, իրական շահառուների ոլորտի փորձագետ Անի Վարդերեսյանը:

Opening Extractives ծրագրի շրջանակում հոկտեմբերի 21-22-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը Օփեն Օուներշիփի և ԱՃԹՆ-ի աջակցությամբ լրագրողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար Աղվերանում անցկացրել է աշխատաժողով[20] «Իրական շահառուների տվյալների օգտագործումը Հայաստանում» թեմայով:

Երկօրյա աշխատաժողովին ուսուցանող նյութերով հանդես է եկել Օփեն Օուներշիփ կազմակերպության քաղաքականության գծով տնօրեն Լուիզ Ռասել-Պրիվատան, ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետի տեղակալ Լալա Ներսիսյանը, «Սիվիլնեթ» անկախ մեդիա հարթակի հետաքննող լրագրողներ Մկրտիչ Կարապետյանը և Անի Գրիգորյանը, «Հետք» լրատվական գործակալության հետաքննող լրագրող Քրիստինե Աղալարյանը: Աշխատաժողովը հնարավորություն տվեց բոլոր մասնակիցներին զարգացնել իրենց կարողությունները իրական շահառուների տվյալները ընթացիկ լրագրողական հետաքննություններում օգտագործելու գործում, ինչպես նաև իր բնույթով իրազեկման միջոցառում հանդիսացավ Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման ընթացքը և դրա միջոցով Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ բացահայտվող տվյալները հասկանալու համար:

2.4. ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների ապահովում, ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և շահառուների կարողությունների հզորացում

Միջոցառումներ 61-66

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է մետաղական հանքարդյունաբերության վերաբերյալ հրապարակային տվյալների համակարգված բացահայտման ուղղությամբ առաջին առաջադրանքը, այն է՝ տվյալների համակարգված բացահայտումների SS համակարգի տեխնիկական առաջադրանքի կազմումը: Այս աշխատանքը կատարելու համար հոկտեմբերի 21-ին SS փորձագետ Քրիստինե Մազմանյանի հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, ըստ որի վերջինս պետք է 2023թ. առաջին եռամսյակում

[20] http://www.foi.am/hy/news/item/2304/

իրականացված ուսումնասիրության արդյունքների վրա հիմնվելով ներկայացնի համապատասխան տեխնիկական առաջադրանքը:

ԱՃԹՆ-ի կարողությունների հզորացման միջոցառումների շարքում կարևոր նշանակություն է ունեցել ԱՃԹՆ-ի գործընթացում ներգրավված համայնքների կարողությունների զարգացմանը նվիրված դասընթաց-աշխատաժողովը[21], որը տեղի է ունեցել 2022թ. օգոստոսի 3-5-ը Ծաղկաձորում՝ «Համայնքների կողմից մշակվող և իրականացվող ծրագրերում բնապահպանական և առողջապահական միջոցառումների արդյունավետության բարձրացման և կարողությունների զարգացման» թեմայով: Աշխատաժողովը կազմակերպել է ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը Շրջակա միջավայրի նախարարության հետ համագործակցությամբ՝ Համաշխարհային բանկի «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում» դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ: Աշխատաժողովին մասնակցել է Հայաստանի լիազոր պետական մարմինների, մարզպետարանների, ազդակիր համայնքների, Երևանի քաղաքապետարանի շուրջ 50 պատասխանատու աշխատակից: Դասընթաց-աշխատաժողովի նպատակն է եղել՝ զարգացնել և ամրապնդել ազդակիր համայնքների, պետական մարմինների պատասխանատու աշխատակիցների կարողությունները և հմտությունները՝ բնապահպանական ծրագրեր կազմելու, իրականացնելու, բնապահպանական և առողջապահական միջոցառումներ մշակելու, ներդնելու և կառավարելու գործում՝ համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի:

Եռօրյա աշխատաժողովի ընթացքում ԱՃԹՆ քարտուղարության աշխատակիցները, Շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետի տեղակալ Արթուր Ղավալյանը, ինչպես նաև Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Շրջակա միջավայրի հիգիենայի» բաժնի բժիշկ-հիգիենիստ Արայիկ Պապոյանը ինտերակտիվ եղանակով մասնակիցներին են ներկայացրել համայնքների կողմից իրականացվող բնապահպանական ծրագրերի նկատմամբ ԱՃԹՆ-ի ստանդարտի կողմից ներկայացվող թափանցիկության և հաշվետվողականության պահանջները, ծրագրերը կազմելու վերաբերյալ գործող իրավական կարգավորումները, պրակտիկան, թերությունները: Ստացած գիտելիքների հիման վրա մասնակիցները իրականացրել են բնապահպանական և առողջապահական միջոցառումներ պարունակող ծրագրեր կազմելու թիմային առաջադրանք,

---

21 https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2022/08/08/%D4%B5%D5%BC%D6%85%D6%80%D5%B5%D5%A1-%D5%A4%D5%A1%D5%BD%D5%A8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE-%D4%BE%D5%A1%D5%B2%D5%AF%D5%A1%D5%B1%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%B4/130/

որոնք այնուհետ մեկ առ մեկ քննարկվել են՝ բացահայտելու դրանցում առկա թերություններն ու անհամապատասխանությունները: Վերջում, ներկայացված բոլոր ծրագրերի հիման վրա մասնակիցները ընտրել են լավագույնները:

Այսպիսով, դասընթաց-աշխատաժողովը նպաստել է մասնակիցների գիտելիքների և կարողությունների զարգացմանը, որոնք անհրաժեշտ են բնապահպանական ծրագրեր կազմելու, իրականացնելու, ինչպես նաև ԱՃԹՆ-ի ստանդարտի թափանցիկության և հաշվետվողականության պահանջներն ապահովելու համար: Աշխատաժողովը նաև օգնել է ստեղծել համայնքնային մասնագետների ցանց, որոնք առաջիկայում պետք է աջակցեն միմյանց լավագույն փորձի փոխանակման նպատակով:

3. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրում

Միջոցառումներ 68-70

Աշխատանքային ծրագրի այս բաժնում նախատեսված աշխատանքներ երկրորդ կիսամյակում չեն իրականացվել:

Հաշվետու ժամանակահատվածում ընդունված մետաղական հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական ակտերը

Հաշվետու ժամանակահատվածում ընդունվել են հետևյալ իրավական ակտերը.

- ՀՀ կառավարության 01.09.2022թ. «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները հաստատելու մասին» թիվ 1370-Ն որոշումը[22],
- ՀՀ կառավարության 01.09.2022թ. «Համայնքային մասհանումների ծախսման ծրագիրը կամ ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանելու մասին» թիվ 1358-Ն որոշումը[23],
- ՀՀ կառավարության 04.08.2022թ. «Համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությանը ներկայացվող պահանջները և հաշվետվության ձևաչափը հաստատելու մասին» թիվ 1198-Ն որոշումը[24],

[22] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168150
[23] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168141
[24] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166938

- ՏԿԵ նախարարի 26.09.2022թ. «Ազդակիր բնակավայրերի ցանկը սահմանելու մասին» թիվ 16-Ն հրամանը[25] ,
- ՏԿԵ նախարարի 26.09.2022թ. «Ազդակիր բնակավայրերին ու ազդակիր բնակավայրեր ներառող համայնքներին համայնքային մասհանումների բաշխման ձևը հաստատելու և 2021 թվականին վճարված ռոյալթիներից համայնքային մասհանումների բաշխումը կատարելու մասին» թիվ 2732-Ա հրամանը[26]:

[25] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168976

[26] https://mtad.am/pages/legal-acts?category=3&search=2732